

ԱՌԱՃՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԱՍ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել առածների և ասացվածքների դաս կամ տիպ հասկացությունը: Առածների դասին առնչվող խնդիրը համարվում է բավականին բարդ և ուշագրավ, որին անդրադարձել են բազմաթիվ առաջաբաններ:

Ամերիկացի հայտնի առաջաբան Ա. Թեյլորն առաջինն էր, որ ներմուծեց առածի դաս կամ տիպ տերմինը: "The Proverb" գրքում առածները համարելով շատ ազգային մշակույթների սեփականությունը՝ Թեյլորն անվանել է մեկ առանձին լեզվում արտահայտված նույն առածի համարժեքները առածի տարբերակներ, իսկ այդ տարբերակների հավաքածուն կոչել է դաս (տիպ) (7, 20-22):

Մեկ այլ ֆինն առաջաբան Մ.Կուուսին շեշտում է առանձին առածների մոնոգրաֆիկ վերլուծության նշանակությունը և առածին վերաբերում է որպես տարբերակների հավաքածու, որը գրվել է տարբեր վայրերում և տարբեր ժամանակաշրջաններում: Նա ուշադրությունը բևեռում է առածի այն տարբերակների վրա, որոնք հանդես են գալիս որպես հիմնական կամ երկրորդական:

Համաձայն Մ. Կուուսիի համարժեքների վերլուծությունը և համեմատությունը կարող է օգնել լուծել առածի պատկերի ծագման, զարգացման և հասարակական գործառույթների հիմնախնդիրները: Մ. Կուուսին ներկայացրեց միջազգային առածների դաս-ինդեքսի գաղափարը՝ առաջարկելով առածի կառուցվածքի վերլուծության համար հիմնական չափանիշները և տերմինները (4, 473-476): Նա ներկայացրեց առածը ձևավորող բաղադրիչները երեք մակարդակով՝ 1) միտք 2) կառուցվածք 3) միջուկ:

Համաձայն Մ. Կուուսիի, երբ տարբեր ազգերի առածների միտքը և միջուկը համընկնում են, ապա նրանք համարվում են նույն առածի տարբերակները: Համաձայնելով այդ մտքի հետ ցանկանում ենք ավելացնել, որ, մեր կարծիքով, այն առածը, որը տարբեր լեզուներում ունի իր մեկ և նույնիսկ ավել տարբերակները և համարժեքները, համարվում է անփոփոխակ: Ավելին՝ այն տարբեր լեզուներում արտահայտվում է նույն իմաստը՝ օժտված լինելով նույն մտքով և միջուկով, բայց, միևնույն ժամանակ, այն կարող է հիմնված լինել բոլորովին տարբեր պատկերների և կառուցվածքի վրա:

Մ. Կուուսին շարունակում է զարգացնել միտքը՝ ասելով, որ ընդհանուր մտքով և կառուցվածքով կապված տեքստերը կոչվում են առածների համակառուցվածքային հոմանիշներ, իսկ նույն կառուցվածքով և հաղորդակցման համարժեք միջուկով տեքստերը, որոնք տարբեր մտքեր են արտահայտում, կոչվում են կապակցված առածներ:

Ըստ Գ. Լ. Պերմյակովի դասակարգման որևէ առածի կամ ասացվածքի իսկական թեման համարվում է ոչ թե այս կամ այն բառը, ոչ թե այս կամ այն իմաստը և նույնիսկ ոչ թե մարդկային գործունեության այս կամ այն բնագավառը, այլ հակասող էությունների անփոփոխակ զույգը, որին հանգում է տվյալ առածում օգտագործված պատկերների իմաստը:

Ընկալելով այն փաստը, որ ուսումնասիրելով միայն տրամաբանանշանային պլանը, անտեսվել է առածների իմաստային (պատկերավոր) բաղադրիչների հավաքածուն, Պերմյակովը առածները բաժանեց թեմատիկ խմբերի, որոնք, համաձայն տեսական բացատրությունների, կոչվում են անփոփոխակ խմբեր: Այսպիսի խմբերը առանձնացնում են հասկացությունների այնպիսի զույգեր, որոնք արտացոլում են պատկերի էությունը, այսինքն՝ «բովանդակություն և ձև», «մեծ և փոքր», «սկիզբ և ավարտ», «լավ և վատ»:

Օրինակ՝ *“the mountain brought forth a mouse”*—«սարը մուկ է ծնել» առածում թեման ոչ թե սարն է կամ մուկը, և ոչ էլ մի առարկայի ծնունդը, այլ «մեծ-փոքր» անփոփոխակ զույգը, և որպես նրանց ներկայացուցիչներ առածում հանդես են գալիս մկան և սարի պատկերները: Պետք է ասել, որ առածների առարկայական-պատկերավոր կազմը իրենից ներկայացնում է նրանց իմաստային բովանդակության անբաժանելի մասը, որը չի վերջանում միայն տրամաբանական ձևով: Դրանում հեշտ է համոզվել հետևյալ առածների օրինակներով՝ *“there is no smoke without fire”*—«առանց կրակի ծուխ չի լինում», *“there is no rose without a thorn”*—«առանց փշի վարդ չի լինում», *“there is no river without a bank”*—«առանց ափի գետ չի լինում», որոնց տրամաբանական ձևը, որը յուրաքանչյուր առածի թեմատիկ զույգերի անդամներն իրար է միացնում, նույնն է: Երեք առածներում էլ ենթադրվում է, որ առաջին անդամը առանց երկրորդի գոյություն չունի: Միևնույն ժամանակ այս առածներից յուրաքանչյուրի իմաստը տարբերվում է մյուս երկուսի իմաստից՝ ըստ թեմատիկ զույգերի իմաստի: Առաջին առածի իմաստը ենթադրում է, որ առանց պատճառի հետևանք չի լինում (նաև առանց գլխավորի երկրորդական չի լինում), երկրորդը, որ լավ իրը առանց թերության չի լինում, և երրորդը, որ ամբողջականը առանց իր անբաժանելի մասի չի լինում (մաս ամբողջ հարաբերությունն է):

Վերադառնալով բուն թեմային՝ նշենք, որ ըստ Գ. Պերմյակովի առածային թեմատիկ խմբերը կարելի է համեմատել լեզվի բառային տարրերի հետ (ինչպես մեծ-փոքր, մաս-ամբողջ), իսկ ձևակազմական խմբերը՝ (ինչպես համապատասխանություն-անհամապատասխանություն, փոփոխություն-անփոփոխություն և այլն) լեզվի քերականության հետ։ Եվ ինչպես բառային տարրերը նախադասության մեջ միանում են ըստ քերականական կանոնների, այնպես էլ առարկայաթեմատիկ գույգերը և նրանց տարրերը առածներում միանում են ձևակազմական խմբերի հետ նրանց հատման կանոններով։ Ըստ նույն գրքում ներկայացված մատրիցայի՝ առարկայաթեմատիկ խմբերի հիմքում ընկած անփոփոխակ գույգերը կազմում են սյուներ, իսկ ձևակազմական խմբերի հիմքում ընկած հարաբերությունների ձևերը՝ տողեր։ Եվ հենց սյուների և տողերի հատման միջոցով էլ առաջանում են կոնկրետ առածներ, որոնք վերաբերում են յուրաքանչյուր թեմատիկ խմբի մեջ գտնվող ձևակազմական ենթախմբին։

Օրինակ՝ մեծ-փոքր սյունի և ծնունդ-անծնունդ տողի հատումով առաջանում է «սարը մուկ ծնեց» առածը, որը վերաբերում է «մեծ-փոքր» առարկայաթեմատիկ խմբին և «ծնունդ-անծնունդ» ձևակազմական ենթախմբին։ Փաստորեն, յուրաքանչյուր առած և ասացվածք վերաբերում է որևէ ձևակազմական խմբին, և դա հասկանալի է, քանի որ յուրաքանչյուր առած ինչ-ինչ հարաբերություններ է մողելավորում նրանում հիշատակված առարկաների միջև կամ էլ ուղիղ կամ փոխաբերական ձևով անվանում է այդ ասույթների հատկանիշները։ Առածը կարող է վերարտադրել հարաբերության միայն մեկ տեսակ և վերաբերել միայն մեկ ձևակազմական ենթախմբին։

Այսպիսով, ըստ Գ. Պերմյակովի առարկայական-թեմատիկ անփոփոխակ գույգերի հատումը ձևակազմական գույգերի հետ ներկայացնում է առածների և ասացվածքների տրամաբանաճանաչային և իմաստաբանական պլանների վերամիացում՝ վերամիավորելով այդ երկու պլանները մեկ ընդհանուր պլանի մեջ։ Իր տեսական հողվածներից մեկում քննարկելով իր իսկ կողմից հիմնած դասակարգման համակարգի հիմունքները՝ նա նշել է, որ առածների տրամաբանաիմաստաբանական դասակարգման հենց այս մեթոդի շնորհիվ կարելի է ձևակերպել և սահմանել առածի «դաս» հասկացությունը։ Առածի դասը կարելի է սահմանել որպես առածի թեմաների թեմատիկ տարրերի մի որոշակի հավաքածուի հատումը որևէ մի ձևակազմական ենթախմբի հետ (6, 133)։

Հարկ է նշել, որ շատ առածաբաններ, ինչպես Ս. Կուուսին, Ա. Կրիկմանը, Ե. Կոկարեն և այլոք Պերմյակովի առածների տրամաբանական և

իմաստաբանական դասակարգումը համարում են արժեքավոր և խիստ չափանիշների վրա հիմնված, և այդ իսկ պատճառով էլ այդ դասակարգումը կարող է հիմք հանդիսանալ մյուս առածաբանների կողմից առաջարկվող դասակարգումների համար: Այս ամենով հանդերձ, Գ. Պերմյակովի դասակարգումն էլ գերծ չի մնում քննադատությունից: Օրինակ՝ Ե. Կոկարեն քննադատում է Պերմյակովին այն բանի համար, որ նա չի ընդգրկել իր գրքում լիտվերեն առածները, ինչպես նաև չի ընդգրկել հոմանիշային առածները ընդհանուր դասի մեջ, այսինքն առածներ, որոնցում նույն միտքը արտահայտվում է տարբեր գեղարվեստական պատկերների միջոցով (2, 278): Լատվիական առածների համեմատական ուսումնասիրության մեջ Կոկարեն համեմատում է լատվիական առածները այլ ազգերի առածների հետ: Քննարկելով նաև դասի հիմնախնդիրը՝ նա ձևավորել է հետևյալ չափանիշները դասի հաստատման համար՝

- 1) շարահյուսական և բանաստեղծական կառուցվածքի նմանություն
- 2) պատկերի համակարգի իմաստային համապատասխանություն «ճշգրտություն»:

Այն դեպքերը, որտեղ ճշգրիտ գեղարվեստական կաղապարին պատկանող առածները օգտագործվում են տարբեր իմաստներով, շատ հազվադեպ են, չնայած երբեմն անհնար է խուսափել առածային տեքստերի տարբեր դասերին վերագրումից, որոնք արտահայտված են պատկերի նույն շարժառիթների միջոցով: Կոկարեն, հետևելով առածի դասի տարբերակման իր իսկ սկզբունքին, իր գրքում համախմբել է հոմանիշային առածները մեկ ընդհանուր դասի ներքո: Նա ավելի շատ նախընտրում է առածի ընդհանուր գաղափարը, քան պատկերը: Հետևաբար, բացի այն դասերը, որոնցում շարահյուսականի և բանաստեղծականի քննարկված ընդհանրությունը քիչ թե շատ զուգակցվում է, ի հայտ են գալիս տեքստերի ժողովածուներ, որոնք երևան են հանում բավականին տարբեր և չկապակցված բանաստեղծական պատկերներ:

1975թ.-ին Proverbium number 25-ում հրատարակված առածաբանների միջազգային սիմպոզիումը խորհուրդ է տալիս առաջնորդվել Մ. Թիլիի, Վ. Ուայթինգի և Ադալբերգ Կրզիգանովսկու դասակարգումների համակարգով: Այս բոլոր հրապարակումներում առածների տարբերակների հավաքածուն, որոնցում բանաստեղծական պատկերի հիմնական տարրերը համընկնում են՝ ներկայացված են որպես առանձին, անկախ առածներ: Մեկ ընդհանուր բառկարելի է գտնել յուրաքանչյուր առածի դասի համար, և այդ դասերը բաշխված են ժողովածուի մեջ՝ հաշվի առնելով բառերի տեղը համապատասխան լեզվի այբուբենում: Քանի որ Ուայթինգի և Թիլիի կողմից հրատարակված ժողովա-

ծուները մեծ չեն, առանձին առածների դասեր կազմող տեքստերի հավաքածուները համեմատաբար պարզ են: Դասերում առածային տեքստերը դասավորված են ըստ այբուբենի ժամանակագրության: Մյուս կողմից Կրդիզանովսկու լեհերեն առածների հրապարակումները ներառում են առանձին առածներ պարունակող տեքստերի մեծ խմբեր: Նրանք բաժանվում են ավելի փոքր խմբերի՝ նշված լինելով այբուբենի տառերով, իսկ ավելի փոքր բաժինների տեքստերը նշված են ըստ ժամանակագրության: Հիմնական բառի գործառույթները վերագրվում են այն բառերին, որոնք ավելի հաճախ են կրկնվում տեքստերում, օրինակ՝ "Яблоко от яблони недалеко падает" առածում "яблоко"-ն այդ առածի հիմնական բառն է: Եվ ըստ այս սկզբունքի ընտրված տարբերակների հավաքածուն կազմում է առածների դասերը, չնայած որ 19-րդ դարում Կրդիզանովսկին իր ժողովածուի մեջ «դաս» տերմինը չի օգտագործել:

Հունգարացի առածաբան Վիլմուս Վոյգտը, որը վերլուծել է մեկ առած հարցատոմսի ձևով, ձևակերպել է այն միտքը, որ առածների իմաստները, որոնք արտահայտված են ամբողջովին համարժեք լեզվաբանական ձևերով, նշանակալիորեն տարբերվում են (9,126): Առածների իրավիճակային գործառույթները նույնպես կախված են այսպես կոչված իրավիճակային տարբերակներից:

Նշենք, որ առածի կառուցվածքի վերլուծության վերաբերյալ հոդվածների բազմազանությունը այս կամ այն ձևով առնչվում է առածի դասի հիմնախնդրին: Ամերիկացի բանահյուս Ա. Դանդեսը առածի կառուցվածքում փնտրում է հաստատուն բաղադրիչներ՝ երկմտելով, թե որը պետք է լինի առածի կառուցվածքային վերլուծության հիմնական միավորը՝ պատկերը, իմաստը թե՞ առածի ձևավորման համար կիրառվող բանաձևը: Ըստ Դանդեսի՝ այս վերջին միավորը ավելի շատ քննարկման է արժանի (1, 963): Նա ուշադրություն է դարձրել այն փաստին, որ այն տեքստերում, որոնք բաղկացած են մեկ նկարագրական տարրից և ունեն միայն մեկ թեմա և մեկ բացատրություն, հակասությունն անհնար է: Դա ցույց է տալիս, որ Պերմյակովի և Կուլուսիի բինարային հակասություններին վերաբերող սկզբունքը, որը կարող է կիրառվել բոլոր առածների նկատմամբ նրանց դասակարգման գործընթացում, անհնար է:

Պարզվում է, որ առածների ժողովման հենց առաջին փորձը բախվում է առածի՝ որպես տարբերակների հավաքածուի և նրանց միջազգային համարժեքների խնդրի հետ: Առածային տեքստեր ժողովողներից ոմանք, օրինակ Դյուրինգսֆելդը, ավելի շատ ուշադրություն է դարձնում այն մտքին, որ առածի համարժեքները վերարտադրում են տարբեր պատկերներով արտա-

հայտված տեքստեր, մինչ մյուսները, օրինակ Ուօնդերը, նախընտրությունը տալիս է արտաքին չափանիշին՝ ուսումնասիրելով միայն հիմնական բառերի բաշխման սկզբունքը:

Վ. Մուլքի կողմից ժողոված առածների համեմատական հրապարակումները պետք է առանձնացվեն վերջին տասնամյակներում հրատարակվածներից: Նկարագրելով դասերի կազման իր ուրույն սկզբունքը՝ Մուլքը նշում է, որ երկու կամ ավել առածային տեքստերի տիպաբանական կազմը որոշվում է նրանց մտքի և միջուկի նույնականությամբ, իսկ այստեղ միջուկ ասելով հասկանում ենք պատկերի հիմնական տարրը կամ էլ հասկացությունների հավաքածուն:

Պետք է նշել, որ Մուլքի կողմից առաջարկվող հասկացության ձևակերպումը հիմնվել է Կուուսիի տերմինների վրա:

Վերադառնալով Մ. Կուուսիին՝ նշենք, որ փորձելով կիրառել Գ. Պերմյակովի դասակարգումը իր ուսումնասիրության համար՝ Կուուսին որոշ դժվարությունների է հանդիպել: Եվ ինչ-որ չափով քննադատելով Պերմյակովի համակարգը՝ նա հրատարակեց միջազգային առածների դաս-ինդեքսի իր սեփական առաջարկները, որում նա չի նկարագրում ամբողջապես նախագծված ինդեքսի մակրոկառուցվածքը, այլ ապահովում է նրա զխավոր մասերի լուսաբանումը օրինակներով: Մ. Կուուսին շեշտում է, որ եթե դասակարգումը նախատեսված է միջազգային կիրառման համար, ապա պետք է լուծել առածային համապատասխանությունների բազմամակարդակ բնույթի խնդիրը, և այն կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ բոլոր մայրցամաքներին բնորոշ համապատասխանությունների ինչ-որ մի մակարդակն ընդունված է որպես հիմնական:

Յաշվի առնելով այն փաստը, որ յուրաքանչյուր առած բաղկացած է մի քանի մակարդակների փաստերից և համաշխարհային մակարդակով գտնելով ամենահաստատուն տվյալները՝ Մ. Կուուսին նկարագրում է դասը իր կողմից մեծ ուշադրության արժանացած և մշակած նախագծերից մեկում՝ դիմելով բինարային հակասությունների հարաբերությունների համակարգին, համաձայն որի յուրաքանչյուր առած կարելի է մեկնաբանել որպես երկընտրանքի միջև եղած ընտրություն (5, 710)։

Ս. Կուուսին նշում է, որ կառուցվածքային վերլուծությունը առածաբանության բոլոր փակված դոմենների հիմնամասային բանալին չէ, այլ այն մի բանալի է, որը ճանապարհ է հարթում թվացյալ համարժեքությունից և տարբերություններից մինչև հիմնական նմանությունների և հակասությունների կանոնավոր ընկալումը:

Ըստ այդմ էլ Մ. Կուուսիի կողմից նշված առաջին օրինակը պատկերում է այն հնարավոր միջոցը, որ առածները դասակարգվեն ըստ ինդեքսի և, հետևաբար, առաջին օրինակը պատկերում է առածների ինդեքսով դասակարգվելու հնարավոր միջոցը, և Մ. Կուուսին օգտագործել և հրատարակել է աֆրիկյան, ասիական և եվրոպական ազգերի շատ տեքստեր՝ քննարկելով երկու անհամատեղելի մրցակիցներին, ըստ որի տեքստերի ամբողջական դասը կոչվում է «երկու մրցակիցներ համաձայնության չեն գա նույն վայրում», որն էլ իր հերթին բաժանվում է ավելի փոքր ենթամասերի: Այդ տեքստերի անգլերեն տարբերակը վերաբերում է երկու թագավորների անհամերաշխությանը, լատիներենը վերաբերում է երկու թագավորական գահերի գծողությանը, տաջիկերենը՝ երկու շահերի գծողությանը, մյուս ենթամասի տեքստերը անգլերենում վերաբերում են նույն տանը ապրող երկու կանանց, ֆիններենում վերաբերում է աղջկա երկու երկրպագուներին, իսկ վիետնամերենում՝ մեկ տան երկու տներին:

Կուուսիի առածների միջազգային ինդեքսի երկրորդ օրինակը պարունակում է «մեկ-երկու», «մեկ-երկու և ավել», «մաս-ամբողջ» բինարային հակասությունները, որոնց դասերն ընթացիկ համարներ են ձեռք բերում, անուններն արտահայտվում են մետատեքստերով «օ՝ 1.2. մեկ ձեռքը չի անի այն, ինչ մյուսը կանի», դասերը բաժանվում են ավելի փոքր ենթադասերի և ի ցույց են դրվում այբուբենի տառերով: Համաձայն Մ. Կուուսիի՝ եթե բոլոր առածների դասակարգման համար որպես հիմք վերցնենք չափանիշների միայն մեկ մակարդակ, ապա դա կարող է հակադրվել մեր նպատակներին, քանի որ տարբեր համատեքստերում միևնույն չափանիշի օգտագործումը կարող է հանգեցնել հակասական արդյունքի: մի դեպքում այն կարող է տալ կոնկրետ դասակարգում, մյուս դեպքում՝ ոչ:

Օրինակ մարդկանց կարելի է դասակարգել ըստ նրանց սեռի, հասարակական կամ բարոյական չափանիշների: Կենդանիներին կարելի է դասակարգել ըստ նրանց տեսակային պատկանելության, ըստ մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունների և այլն:

Զնայած Կուուսին պնդում է, որ իր համակարգը հիմնված չէ Գ. Պերմյակովի դասակարգման վրա, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ Գ. Պերմյակովի տրամաբանափմաստաբանական դասակարգումն էլ հիմք է հանդիսացել մահ այդ համակարգի ստեղծման համար՝ հաշվի առնելով որոշ ընդհանրություններ. ինչպես օրինակ առածները դասակարգելիս երկուսի մոտ էլ գործում են բինարային հակասությունները (լավ-վատ, մեծ-փոքր (Պերմյակով), մեկ-երկու, մաս-ամբողջ(Կուուսի):

Ինչպես Ա. Կրիկմանն է նկատել, վերը նշված առաժի դասի վերաբերյալ մեկնաբանություններն օժտված են հիմնական և լրացուցիչ նշանակություններով և բավականին համակարգված ձևով են ներկայացնում առաժների դասի խնդիրը (հատկապես Գ. Պերմյակովը): Սակայն ըստ Կրիկմանի երկու համակարգերում էլ տուժում է առաժների բանափոխական կողմը: Ինչպես նաև բանաստեղծական կողմը: Ըստ նրա առաժները ոչ միայն տրամաբանական կամ փիլիսոփայական դրույթներ են, այլ պատկերավոր իմաստ կրող դարձվածքներ: Կրիկմանը վերծանում է առաժային տեքստերը՝ հիմնվելով միայն նրանց զուտ իմաստների և այն պատկերացման վրա, թե ինչպիսին է արտալեզվական իրականության ասույթների հարաբերությունը, թե ինչ նշանակությամբ են օժտված այն բառերը, որոնք հանդիպում են կոնկրետ առաժային համատեքստում, թե ինչ են իրենցից ներկայացնում առաժները, ըստ ինչ իմաստային կանոնների են նրանք կազմվում և որ դեպքերում են օգտագործվում: Երբ այս կամ այն առաժը տվյալ լեզուն ուսումնասիրողի մշակույթին անծանոթ է կամ էլ միջազգային է համարվում, ապա բազմաթիվ սխալներ են ծագում առաժի իմաստը վերծանելիս:

Առաժներն օժտված են բարդ կառուցվածքով, և տարբեր դասերում ներկայացված մետատեքստերն ունակ չեն լիովին նկարագրելու առաժում դրսևորվող բոլոր հարաբերությունները: Եվ եթե փորձենք ժողովել առաժի իմաստային կառուցվածքի մի սպառիչ նկարագրում, ապա այն կվերածվի ընկալումից դուրս «վեր» մի բարդ նկարագրման: Այնուամենայնիվ, այն պարզորեն ցույց կտա, որ առաժի իմաստային նկարագրման ընդհանրացումը ոչ այլ ինչ է, քան առաժի ամբողջական կառուցվածքից մի որոշակի ենթակառուցվածքի կամ էլ մի կոնկրետ հարաբերության քաղվածքը, որն արվել է՝ միևնույն ժամանակ անտեսելով մյուս ողջ իմաստային տեղեկատվությունը:

Ըստ Գ. Պերմյակովի Ա. Կրիկմանը ճիշտ է հանգել այն եզրակացության, որ առաժները իմաստային անորոշության մեջ են: Իրոք, եթե առաժը իրենից ներկայացնում է ոչ միայն նշան, այլև որևէ իրավիճակի կաղապար՝ այսինքն ասույթների միջև եղած հարաբերությունների կաղապար, իսկ այդ ասույթները նրանում ներկայացված են թեմատիկ տարրերի բավականին բարդ հավաքածուի միջոցով, ապա նույն առաժը կարող է օգտագործվել տարբեր պայմաններում՝ տարբեր նպատակներով: Եվ տարբեր դեպքերում անհրաժեշտ տրամաբանական շեշտից կախված՝ տարբեր թեմատիկ տարրերը կարող են գլխավոր համարվել և հետևաբար առաժի ասույթների միջև հարաբերության տարբեր ձևեր դրսևորել: Եվ դա նշանակում է, որ յուրաքանչյուր անփոփոխակ զույգ և հարաբերության յուրաքանչյուր ձև յուրաքանչյուրն իր հերթին իր ձևով է

ընդգրկում առածի կոնկրետ դեպքերի հզոր թիվ, որոնք բոլորն էլ վերաբերում են տվյալ անփոփոխակին:

Օրինակ «մեծ-փոքր» թեմատիկ անփոփոխակ զույգը կարող է ցույց տալ «սար և մուկ», «ծով և կաթիլ», «փիղ և շնիկ» ասույթները, այսինքն կարող է վերաբերել իրար ոչ նման ասույթներին, միայն թե նրանք մեծ և փոքր լինեն: Իսկ «պատճառ և հետևանք» հարաբերություն ցույց տվող զույգի հետ կարող են կապված լինել «կրակը և ծուխը», «քամին և տերևների խշշոցը», «հավը և ձուն» և այլն:

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ առածների դասի վերաբերյալ տարբեր առածաբաններ ունեն տարբեր կարծիքներ և նրանցից յուրաքանչյուրն առաջարկում է իր կողմից մշակած սկզբունքները՝ քննադատելով և միևնույն ժամանակ ընդգծելով մյուս առածաբանի դասակարգման համակարգի նշանակալից առավելությունները, ինչպես նաև թերությունները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, ըստ էության, Գ. Պերմյակովի առածների իմաստաբանական դասակարգումն է հիմք հանդիսանում մյուսների համար՝ լինելով բավականին համակարգված, արժեքավոր և խիստ չափանիշների վրա հիմնված՝ միևնույն ժամանակ զերծ չլինելով քննադատությունից:

Գրականություն

1. Dundes, Alan 1975. "On the Structure of the Proverb". In *Proverbium*, no. 25:961-973.
2. Кокаре, Элиза, "Теория и практика сравнительной паремнологии". Образ и поэтическое слово в контексте, 274-289, Москва, 1984.
3. Krikmann, Arvo 1974. "Some difficulties arising at semantic classifying of proverbs". In *Proverbium*, no. 23:865-879.
4. Kuusi, Matti 1970. "How Can a Type-index of International Proverbs Be Outlined?". In *Proverbium*, no. 15:473-476.
5. Kuusi, Matti 1972. "Towards an International Type-system of Proverbs". In *Proverbium*, no. 19:699-736.
6. Пермяков Г. Л. О смысловой структуре и соответствующей классификации пословичных изречений. //Паремнологический сборник.-М., 1978.
7. Taylor, Archer 1931. *The Proverb*. Cambridge, Massachusetts.
8. Tilley, M. P. 1950. *A Dictionary of the Proverbs in England in the Sixteenth and Seventeenth Centuries*. Michigan.
9. Voigt, Vilmos 1970. "Variantenschichten eines ungarischen Proverbiums". In *Proverbium*, no. 15:125-128.